Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N ԵՀ-1

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2026 թվական, հուլիսի 21, ժամը՝ 11:00

Նախագահում էր՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանը (Հանձնաժողովի նախագահ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանի մշտական փոխարինող)

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի անդամներ

Աստղիկ Գրիգորյան	Առողջապահության նախարարի տեղակալ
Վահագն Համբարձումյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության (այսուհետ՝ ՀԳՀՄ) նախագահ
Նարե Սարգսյան	ՀԳՀՄ նախագահի տեղակալ
Լիլիթ Ադամյան	ՀԳՀՄ գործադիր տնօրեն
Հերմինե Թովմասյան	ՀԳՀՄ անդամ
Էլեն Մանասերյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (այսուհետ՝ ՀԱՄԿ) նախագահ
Շուշան Պետրոսյան	Առողջապահության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

Էդուարդ Փահլևանյան	Լեռնագործների, մետալուրգների և ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Անահիտ Ասատրյան	Պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Արմեն Ավետիսյան	Բուհերի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

Հանձնաժողովի անդամների փոխարեն նիստին մասնակցող մշտական փոխարինողներ՝

Մարգարիտա Զալիբեկյան	Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ (Հանձնաժողովի անդամ, Արդարադատության նախարարի տեղակալ Տիգրան Դադունցի մշտական փոխարինող)
Քրիստինե Գևորգյան	Էկոնոմիկայի նախարարության գործարար միջավայրի վարչության պետ (Հանձնաժողովի անդամ, Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Լիլյա Սիրականյանի մշտական փոխարինող)
Շուշանիկ Ստեփանյան	ՀԳՀՄ անդամ (Հանձնաժողովի անդամ, ՀԳՀՄ խորհրդի անդամ Արթուր Հովհաննիսյանի մշտական փոխարինող)

Նիստին մասնակցող այլ անձինք՝

Ժորա Սարգսյան	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ ԱՍՀՆ) աշխատանքի և զբաղվածության վարչության պետ

Արփինե Սարգսյան	ԱՍՀՆ աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ
Ինեսա Գևորգյան	ԱՍՀՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի փորձագետ
Սիրանուշ Մելոյան	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մասնագիտական կրթության և ուսուցման քաղաքականության մշակման և ռազմավարության բաժնի պետ
Մարինա Ժամկոչյան	ՀԳՀՄ անդամ (Հանձնաժողովի անդամ Լիլիթ Ադամյանի մշտական փոխարինող)
Մարինա Սանդոյան	ՀԳՀՄ անդամ (Հանձնաժողովի անդամ Նարե Սարգսյանի մշտական փոխարինող)

Բացակայում էին՝
Հանձնաժողովի անդամներ

Տիգրան Դադունց	Արդարադատության նախարարի տեղակալ
Լիլյա Սիրականյան	Էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արաքսիա Սվաջյան	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար տեղակալ
Արթուր Հովհաննիսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության խորհրդի անդամ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. Հանրապետական եռակողմ հանձնաժողովի աշխատակարգի նախագծի քննարկում և հաստատում

2. Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրի մշակման աշխատանքների պլանավորում

3. Այլ հարցեր:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանը, ողջունելով ներկաներին, կարևորեց սոցիալական գործընկերների միջև մշտապես ակտիվ համագործակցությանը՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատանքային իրավունքի ոլորտում շատ աշխատանքներ կան անելու և այդ աշխատանքների իրականացման գործընթացում առանձնահատուկ տեղ ունի սոցիալական գործընկերների ակտիվ մասնակցությունը, նրանցից ստացված տեղեկատվությունն ու իրավիճակային վերլուծությունը: Միաժամանակ, նշվեց, որ հաշվի առնելով, որ 21.07.2026 նիստը Հանձնաժողովի առաջին նիստն է, օրակարգը չի ծանրաբեռնվել, սակայն սոցիալական գործընկերների ներկայացրած օրակարգային մյուս հարցերը (ՀԱՄԿ-ն առաջարկել էր օրակարգում ներառել Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և Արդարադատության նախարարության կողմից մշակված ««Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը, իսկ ՀԳՀՄ-ն առաջարկել էր օրակարգում ներառել «Գործատուների միությունների մասին» և «Արհեստակցական միությունների մասին» օրենքներում փոփոխությունների նախագծերի ընթացքի քննարկումը) կքննարկվեն Հանձնաժողովի հաջորդ նիստում, իսկ վերջինս պետք է պլանավորվի հնարավորին կարճ ժամկետում:

Հանձնաժողովի նիստի օրակարգի նախագծի՝ նախապես նիստի մասնակիցներին ուղարկված տարբերակի վերաբերյալ առաջարկություններ չներկայացվեցին: Հանձնաժողովը հաստատեց նիստի օրակարգը՝ նախապես ուղարկված տարբերակով:

1. Հանրապետական եռակողմ հանձնաժողովի աշխատակարգի նախագծի քննարկում և հաստատում

Օրակարգի 1-ին հարցի շրջանակում քննարկվեցին նիստին ներկաների առաջարկությունները՝ Հանձնաժողովի աշխատակարգի նախագծի, այդ թվում՝ վերջինիս վերաբերյալ Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացրած առաջարկությունների վերաբերյալ:

Ծավալված քննարկումներն ամփոփելով՝ օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց՝

Հաստատել Հանրապետական եռակողմ հանձնաժողովի՝ նիստում ներկայացված և համաձայնեցված առաջարկություններով լրամշակված աշխատակարգը (կցվում է):

Միաժամանակ օրակարգի 1-ին հարցի շրջանակներում, Հանձնաժողովի աշխատակարգին համաձայն՝ ԱՍՀ նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանի առաջարկությամբ՝ Հանձնաժողովի նիստին ներկա և քվեարկելու իրավունք ունեցող բոլոր մասնակիցների կողմ քվեարկության արդյունքում Հանձնաժողովի քարտուղար ընտրվեց ԱՍՀՆ աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ Արփինե Սարգսյանը:

2. Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրի մշակման աշխատանքների պլանավորում

Օրակարգի 2-րդ հարցի քննարկման ընթացքում ԱՍՀ նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանը նշեց, որ կարող է քննարկվել գործողությունների ծրագրի նախագծի մշակման համար կողմերի ներկայացուցիչներից բաղկացած աշխատանքային խումբ ձևավորելու տարբերակը ևս, սակայն, որպես առավել նպատակահարմար տարբերակ Լ. Քոչարյանն առաջարկեց, որ Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրի ձևաչափը և ծրագրի նախնական տարբերակը մշակվի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ մինչև օգոստոսի առաջին տասնօրյակը, այնուհետև ներկայացվի Հանձնաժողովի անդամներին կարծիքի՝ սահմանելով ժամկետ առաջարկությունների ներկայացման համար, ապա ստացված առաջարկությունների հիման վրա ձևավորված գործողությունների ծրագրի լրամշակված նախագիծը կքննարկվի հանձնաժողովի նիստում:

Ամփոփելով օրակարգի 2-րդ հարցի քննարկումը՝ օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

2.1. Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներն իրականացնել համաձայն ԱՍՀ նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանի վերոնշյալ առաջարկի:

3. Այլ հարցեր

Օրակարգի 3-րդ հարցի շրջանակում բարձրացվեցին և քննարկվեցին մի շարք հարցեր: Մասնավորապես.

- ՀԳՀՄ նախագահ Վահագն Համբարձումյանի կողմից կարևորվեց Հանձնաժողովի նիստերին Հանձնաժողովի անդամ նախարարների տեղակալների մասնակցությունը:
- ՀԱՄԿ նախագահ Էլեն Մանասերյանի կողմից բարձրացվեց նախարարներին կից հասարակական խորհուրդներում՝ արհմիությունների և գործատուների ներկայացուցիչների մասնակցության հարցը՝ հաշվի առնելով Հանրապետական կոլեկտիվ պայմանագրով ամրագրված պայմանավորվածությունը, համաձայն որի՝ կողմերը պարտավորվել են ապահովել արհմիությունների և գործատուների ներկայացուցիչների մասնակցության հնարավորությունը՝ նախարարներին կից հասարակական խորհուրդներում:
- Էլեն Մանասերյանի կողմից բարձրացվեցին նաև «Արհեստակցական միությունների մասին» և «Գործատուների միությունների մասին» օրենքներում փոփոխությունների նախագծերի ընթացքի վերաբերյալ, ինչպես նաև առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի գործողության հետ կապված խնդիրների քննարկման հարցերը:

ԱՍՀ նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանը, անդրադառնալով բարձրացված հարցերին, նշեց, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կշարունակի հետամուտ լինել ներկայացված առաջարկություններին և հարցադրումներին՝ համապատասխան լուծումներ գտնելու նպատակով: «Արհեստակցական միությունների մասին» և «Գործատուների միությունների մասին» օրենքներում փոփոխությունների նախագծերի ընթացքի վերաբերյալ Լ. Քոչարյանը տեղեկացրեց, որ «Գործատուների միությունների մասին» օրենքում փոփոխությունները գրեթե ամփոփված են, սակայն «Արհեստակցական միությունների մասին» օրենքում փոփոխությունների առաջ գնալու մասով խնդիրը հիմնականում պայմանավորված է ՀԱՄԿ-ի կողմից տարբեր փուլերում ներկայացված տարատեսակ առաջարկություններով: Այս կապակցությամբ Լ. Քոչարյանն առաջարկեց, որպեսզի ՀԱՄԿ-ի կողմից ներկայացվեն վերջնական ամփոփված առաջարկներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի լրամշակել փաթեթը (այդ առնչությամբ Է. Մանասերյանը նշեց, որ ՀԱՄԿ-ն առաջիկայում կներկայացնի այդ ամփոփ առաջարկները), և եթե մինչև մյուս նիստ այդ մասով աշխատանքներն ավարտված լինեն նախագծերի փաթեթը հնարավոր կլինի ընդգրկել նիստի օրակարգ:

Էլեն Մանասերյանի կողմից առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի գործողության հետ կապված խնդիրների քննարկման հարցի մասով Վահագն

Համբարձումյանն առաջարկեց այդ հարցով դիմել անմիջականորեն առողջապահության նախարարություն:

Ամփոփելով նիստը՝ Լուսինե Քոչարյանն առաջարկեց հաջորդ նիստի անցկացումը պլանավորել հնարավորին կարճ ժամկետում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Լ. ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ